

ՀՀ Արագածոտնի մարզպետ Սարգիս Սահակյանի շնորհավորական ուղերձը Հանրապետության տոնի առթիվ

28.05.2015

Հարգելի հայրենակիցներ՝,

Շնորհավորում եմ՝ Հայաստանի առաջին հանրապետության օրվա առթիվ: Տոն, որն առանձնակի պատվով եւ հպարտությամբ ենք նշում՝ դրսևորելով հայրենիքի, մեր անկախ պետության եւ պետականության հանդեպ ունեցած սերն ու ակնածանքը:

97 տարի առաջ՝ մայիսի 28-ին, Հայաստանի Հանրապետության հռչակումը Սարդարապատի, Բաշ-Ապարանի եւ Ղարաբեղիսայի ճակատամարտերում մեր ժողովրդի մղած, հիրավի, հերոսական պայքարի արդյունք էր: Բախտորոշ այդ իրադարձությունը հնարավորություն տվեց դարերի ընդմիջումից հետո վերականգնելու հայոց անկախ պետականությունը, նոր հեռանկարներ բացեց մեր պետության ընթացքը սեփական ուժի զորությամբ կերտելու, աշխարհի հետ ներդաշնակ քայլելու համար:

Այդ ամենը ձեռք բերվեց ազգային միասնության, ազատության ու անկախության, ինքնիշխան պետականության գաղափարների շուրջ մեր ժողովրդի բացառիկ համախմբվածության շնորհիվ: Կանոնավոր գործերի հետ կողք կողքի կենաց-մահու կռիվ էին տալիս մեր աշխարհագրայինները՝ ազգային ազատագրական պայքարի միջով անցած, ինչպես նաեւ առաջին աշխարհամարտի ժամանակ կամավորական շարժմանն անդամագրված մեր բազմաթիվ նշանավոր եւ անձնուրաց գորավարներն ու ռազմիկները, ժողովրդի բոլոր խավերը, քաղաքական ուժերը, հոգևորականությունն ու մտավորականությունը: Այդ դասերը փոխանցվեցին սերնդե-սերունդ, դրսևորվեցին նաեւ Արցախյան հերոսամարտի տարիներին:

Վերստին շնորհավորում եմ Հանրապետության օրվա առթիվ: Միասնությունն ու համախմբվածությունը թո՛ղ որ գորավիզ լինեն մեզ նաեւ այսօր եւ հետագայում՝ ապահովելով մեր երկրի խաղաղ ու անվտանգ ապագան: